Կենդանի ջուր

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՆՅՈՒԹ

Սուրբ գրություններում կարդացեք հետևյալ հատվածները՝ փնտրելով մտքեր և գաղափարներ կենդանի ջրի մասին, որն առաջարկում է Հիսուս Քրիստոսը:

- **Հովհաննես 4.13–14**
- **Հովհաննես 7.37–38**
- **2 Նեփի 9.50–51**
- **3 Նեփի 20.8–9**

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է.

Կենդանի ջուրը, որի մասին նշված է [Հով-հաննես 4.10] հատվածում, ներկայացնում է Տեր Հիսուս Քրիստոսին և Նրա ավետարանը: Եվ ինչպես ջուրն է նպաստում ֆիզիկական կյանքի պահպանմանը, այնպես էլ Փրկիչն ու Նրա վարդապետությունները, սկզբունքներն ու արարողություններն են կարևոր հավերժական կյանքի համար: Ես և դուք, ամեն օր և առատ պաշարով, Նրա կենդանի ջրի կարիքն ունենք, որպեսզի պահպանենք մեր շարունակական հոգևոր աճն ու զարգացումը:

Սուրբ գրությունները պարունակում են Քրիստոսի խոսքերը և հանդիսանում են կենարար ջրի աղբյուր, որին մենք ազատ մոտենալու հնարավորություն ունենք, և որից կարող ենք անհագ ու երկար ըմպել: Ես և դուք պետք է նայենք Քրիստոսին և գանք Նրա մոտ, ով «կենաց ջրերի ակունքն է» (1 Նեփի 11.25, համեմատեք Եթեր 8.26, 12.28)՝ կարդալով (տես Մոսիա 1.5), ուսումնասիրելով (տես Վարդապետություն և Ուխտեր 26.1), փնտրելով (տես Հովհաննես 5.39; Ալմա 17.2) և սնվելով (տես 2 Նեփի 32.3) Քրիստոսի խոսքերով, ինչպես որ տրված է սուրբ գրություններում: Դրանով մենք կարող ենք ստանալ՝ և՛ հոգևոր ուղղորդում, և՛ պաշտպանություն մեր մահկանացու ճամփորդության ընթացքում (Դեյվիդ Ա. Բեդնար, «Կենդանի ջրի աղբյուրը» [Church Educational System fireside for young adults, փետրվարի 4, 2007], 1, broadcasts.ChurchofJesusChrist.org):

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը (1917–2008) ուսուցանել է.

Շատ-շատերը նստում են Հիսուս Քրիստոսի ավետարանի խնջույքի սեղանի շուրջ և միայն մի պատառ են ճաշակում իրենց առջև փռված խնջույքի սեղանից: Նրանք գործողություններ են կատարում. գուցե հաճախում են ժողովների, թերթում են սուրբ գրությունները, կրկնում են ծանոթ աղոթքները, սակայն նրանց սիրտը հեռու է այդ ամենից: Եթե նրանք անկեղծ լինեն, ապա կխոստովանեն, որ իրենց ավելի շատ հետաքրքրում են թաղային վերջին նորությունները, ֆոնդային շուկայի միտումները և իրենց սիրելի հեռուստաշոուն, քան Սուրբ Հոգու աստվածային հրաշքները և քաղցր ծառայությունը:

Ցանկանո՞ւմ եք ճաշակել այդ կենդանի ջրից և ձեզանում ունենալ այդ աստվածային աղբյուրը, որը հավիտենական կյանքի համար կբխի:

Ուրեմն՝ մի վախեցեք: Հավատացեք ձեր ողջ սրտով: Անսասան հավատք զարգացրեք առ Աստծո Որդին: Բացեք ձեր սիրտն անկեղծ աղոթքով: Լցրեք ձեր միտքը Նրա մասին գիտելիքով: Մոռացեք ձեր թուլությունների մասին: Քայլեք պատվիրանների հետ՝ սրբությամբ և ներդաշնակությամբ (Ջոզեֆ Բ. Վիրթլին, «Առատ կյանք», *Ensign* կամ Լիահոնա, մայիս 2006, 100):

Հիմնվելով այս աղբյուրներից ձեր սովորածի վրա՝ ստեղծեք ձեր ելույթի համառոտ շարադրանքը: Համոզվեք, որ այն պատասխանում է հետևյալ հարցերին: Մտածեք նաև, թե ինչպես կարող եք ձեր ելույթում արտահայտել ձեր զգացմունքները Հիսուս Քրիստոսի հանդեպ: Կարող եք կիսվել անձնական փորձառություններով, որոնք ունեցել եք Փրկչի կենդանի ջուրը ճաշակելիս, և ինչպես են այդ փորձառությունները ազդել ձեզ վրա:

- **Ի՞նչ է կենդանի ջուրը, որն առաջարկում է Հիսուս Քրիստոսը:**
- **Մենք ինչո՞ւ ունենք Փրկչի կենդանի ջրի կարիքը:**
- **Ի՞նչ կարող ենք անել՝ Փրկչից կենդանի ջուր ստանալու համար:**
- **Փրկչի հանդեպ ձեր վերաբերմունքի վրա ինչպե՞ս է անդրադառնում այն գիտելիքը, որ Փրկիչն ուզում է,որ բոլորը ճաշակեն Իր կենդանի ջրից:**

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *Living Water*-ի թարգմանությունը.
Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.